ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը Քառօրյա պատերազմի տարելիցին կազմակերպված միջոցառմանը

Հարգելի հյուրեր, ներկաներ, սիրելի ուսանողներ

Արդեն մեկ տարի է՝ ապրիլի առաջին օրերը մեզ համար նոր նշանակություն են ձեռք բերել. դրանք վավերացնում են ապրիլյան Քառօրյա պատերազմը: Մեկ տարի առաջ ադրբեջանական զինված ուժերը լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսեցին արցախաադրբեջանական սահմանի ողջ երկայնքով:

Պատմությունը կրկին մեր ժողովրդին փորձության ենթարկեց, որից մենք դուրս եկանք պատվով՝ շնորհիվ մեր զինված ուժերի բարձր պատրաստականության ու մեր քաջարի զինվորների: Հայ ժողովրդի համար պատմության հերոսական հերթական էջը գրվեց տասնյակ կյանքերի արյան գնով: Մեր պայծառ տղաների անուրանալի ավանդի շնորհիվ հնարավոր եղավ կասեցնել հարձակումը: Մեր խիզախ զինվորներն անձնուրացության, անձնազոհության վառ օրինակներ դարձան՝ մեզ պարգևելով հպարտության անասելի ապրումներ: Այսօր մենք ոգեկոչում ենք ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակը ու նաև մեր երախտիքը հայտնում այն քաջարի զինվորներին, որոնց ավանդն անգնահատելի է: Այսօր մեր կողքին են այն բազմաթիվ տղաները, որոնք կենդանի հերոսներ են, որոնց սխրանքը հիշարժան է ու օրինակելի հատկապես երիտասարդ սերնդի համար:

Այսօրվա մեր միջոցառմանը ներկա են ապրիլյան Քառօրյա պատերազմի մասնակից զինվորներից մի քանիսը: Նրանք բոլորը պարգևատրվել են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով՝ հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում ցուցաբերած բացառիկ արիության, անձնուրացության ու հմտության համար: Շնորհակալություն Ձեզ, սիրելի տղաներ:

Հարգելի ներկաներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ռազմահայրենասիրական գործունեությունը առանցքային է: Մեր կապը բանակի հետ բավական սերտ է, հաճախադեպ են մեր այցերը զորամասեր, իսկ ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները մեր համալսարանական առօրյայի կայուն բաղադրիչն են: Ես շատ եմ կարևորում հայրենասիրության ամրապնդմանն ուղղված բոլոր ջանքերը, խրախուսում եմ բոլոր նախաձեռնությունները: Մեր երկիրն այնպիսի վիճակում է գտնվում, որ մեզ համար անչափ կարևոր է հայրենիքի անվտանգության պահպանումը, ուստի այս գիտակցության ամրապնդումը երիտասարդների շարքերում կարևոր աշխատանք է:

Հուսանք ու հավատանք, որ հետագա տարիներին հնարավորություն կընձեռվի մեր երկրի զարգացումն իրականացնել խաղաղության պայմաններում: Մեր նպատակները, մեր հայրենիքի զարգացումը թող իրագործվի խաղաղ արարման պայմաններում՝ անամպ երկնքի ներքո:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ